

ԵԱՏՄ անդամ երկրներում մեկնարկել է ձեռնարկատիրության աջակցության նոր ծրագիր

ԵԱՏՄ անդամ պետությունների (Ռուսաստան, Հայաստան, Ղազախստան, Բելառուս, Ղրղզստան) տարածքներում կաջակցեն համատեղ (ինտեգրացիոն) ծրագրերի նախաձեռնմանը, աջակցելով ֆինանսավորման և ոչ ֆինանսական գործիքակազմով «Ինտեգրացիա» Եվրասիական մրցույթի հարթակում (այսուհետ՝ Մրցույթ): Հայտերը և համատեղ ծրագրերը Եվրասիական ձեռներեցներից ընդունվում են Մրցույթի Կազմկոմիտեի կողմից յուրաքանչյուր տարի գարնանային (մարտի 1-ից մայիսի 30-ը) և աշնանային (սեպտեմբերի 1-ից հոկտեմբերի 30-ը) ընտրափուլերի շրջանակներում:

«Ինտեգրացիա» Եվրասիական մրցույթի կազմակերպիչներն են Եվրասիական զարգացման բանկը (www.eabr.org), Ռուսաստանի արտահանման կենտրոնը (www.exportcenter.ru),

«Տարածաշրջաններ-կայուն զարգացում» մրցույթի կազմկոմիտեն (www.infra-konkurs.ru):

Մրցույթն անցկացվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովների (ԵՏՀ) աջակցությամբ մինչև 2025 թ. Եվրասիական տնտեսական ինտեգրման ռազմավարական ուղղությունների և Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշումների իրականացման նպատակով: Մրցույթի առաքելությունը «աճի կետերի» և առավելագույն հնարավորությունների ստեղծումն է Եվրասիական ընկերությունների համար մեկ հարթակում և մեկ հայտով: Որպես ԵԱՏՄ ձեռներեցների զարգացման, աջակցության և համագործակցության ոչ պետական հաստատություն, Մրցույթի կազմկոմիտեն իրականացնում է ինտեգրացիոն ծրագրերի նախապատրաստում՝ արտոնյալ վարկավորում, կառավարության աջակցություն և ոչ ֆինանսական աջակցություն ստանալու, ծրագրի զրգացման և միասնական Եվրասիական և այլ արտաքին այլ շուկաներ դուրս բերելու համար:

Մրցույթի ընթացակարգի շրջանակներում իրականացվում է ներդրումային ծրագրերի և գործարար նախաձեռնությունների նախապատրաստման «միասնական համակարգում» հաջող իրականացման և դրական որոշումների կայացման համար հետևյալ մարմինների կողմից՝ կառավարման մարմիններ և զարգացման ինստիտուտներ.

ներդրումային ֆոնդեր և բանկեր.

խոշոր ճյուղային և փորձագիտական միավորումներ (ասոցիացիաներ, միություններ).

մրցույթի «գործընկեր էկոհամակարգի» անդամներ:

«Ինտեգրացիա» Եվրասիական մրցույթի կազմկոմիտեին դիմելու շնորհիվ դուք կկարողանաք բացահայտել բիզնեսի նոր ուղղություններ, տնտեսել աշխատաժամանակն գործարար ծրագրի նախապատրաստման համար՝ ստանալով

1. ԵԱՏՄ անդամ պետությունների խոշոր բանկերի և ներդրումային ֆոնդերի ֆինանսավորման առաջարկներ՝ ընտրելով շահավետ պայմաններ ծրագրի իրականացման համար.
2. Ծրագիր, որը պատրաստ է գործընկերների հետ համագործակցության համար.
3. Ծրագրի գնահատական և աջակցություն կառավարման ազգային մարմինների և միջազգային կառույցների կողմից.
4. «տիպային» նախագծային լուծում ինտեգրացիոն ներդրումային ծրագիր նախաձեռնելու համար.
5. Առաջարկություններ ինտեգրացիոն ծրագրի բարելավման մասով ԵԱՏՄ առաջադեմ փորձագիտական կազմակերպությունների կողմից.
6. Ինտեգրացիոն ծրագրի ընդլայնման հնարավորություններ Եվրասիական բիզնես-թրեքինգի շնորհիվ:

Մրցույթի մասին մանրամասն տեղեկատվությունը, ծրագրերին և հայտատուներին ներկայացվող պահանջները տեղադրված են «Ինտեգրացիա» Եվրասիական մրցույթի պաշտոնական կայքում՝ www.invest-eaunion.org: